ակները,—ժամանակ անցնելով բոլորովին պիտի կորսուին մեզ համար. նոքա որք արդէն մեծապէս հեռացեալ պէտք է համարուին Հայ ազգութենէն, բոլորովին պիտի հեռանան, և թերևս դար մի չը բոլորուած, ոչ ոք պիտի կրնայ զանազանել զնոսա իրեանց այն դրացիներէն, որք թէև այժմ պաշտօնապէս Քուրդ են, բայց անհաւանական չէ որ մի քանի դար առաջ արդի Քուրդահայոց վիճակին մէջ էին միայն . . . :

Ասիկ ազգային Շահ ու Ջենի մի պարզ խնդիր:—Եթէ թոյլ տամք որ այսօր անուամբ ևեթ Հայ համարուած այս հազարաւոր Քուրդահայք բոլորովին Քուրդանան, Հայ ազգը նոյնքան վնասուած պիտի լինի, նոյնքան անգամ պիտի կորսնցունէ: Բայց եթէ միջոցներ խորհիմք և դործադրեմք ուսուցանելու նոցա իրեանց լեզուն, ազգութիւնը, պատմութիւնն և կրօնը, կարելի կը լինի փրկել զնոսա, և աւելորդ է ասել թէ Հայ ազգն աւելի ևս կը զօրանայ նոյնքան ճշմարիտ Հայեր ալ պարունակելով:

Եթէ ազգային պահպանութեան ամենափոքր գաղափարն ու դիտումն ունիմք, այս պարագային առջև մեր ընթացքը տարակուսական չը կրնար լինիլ: Պէտք է ջանամք փրկել զՔուրդահայս: Պէտք է աշխատիմք դաղրեցնել այն հոսանքն, որում բռնուած նոքա կ'ընթանան դէպի վերջնական կորուստ իրեանց ազգութեան: Միջոցները, փա՛ռք Տեառն, չեն պակսիր այս լուսաւորութեան դարուս մէջ: Կրթութիւնը, զոր մեք երէկ ընդհանուր Հայ ազգին փրկութեան միջոց կը համարէինք, ի մասնաւորի փրկութեան միջոց է Քուրդահայոց համար. սոքա յայտնապէս ազգին ամենէն աւելի հիւանդ մասն են, և այն դեղն, հետևաբար, որ ազգին ամբողջութիւնը բուժելու պիտի ծառայէ, ի հարկէ աւելի ստիպողական է հիւանդագոյն անդամին համար:

Ձեմք կարծեր որ մեք առաջինն եղած լինիմք Քուրդահայոց սպառնալից կացութեան վրայ ուշադրութիւն հրաւիրելու մասին, թէև այս նկատմամբ ո՛և է երկմեր աչաց ներքև չէ ինկած դեռ: Բայց մինչև ցարդ ազգը լրջօրէն չէ աշխատած փրկել կորսուելու մօտ եղող իւր այս անդամները: Ձեմք տեսներ որ ցարդ այդ նպատակաւ մի հղօր ջանք եղած լինի: Խօսքը մէջերնիս մնա՛յ, բայց հրա՛շք է եթէ փրկուի ազգ մի, որ ա՛յսչափ անտարբեր է իւր փրկութեան:

Եւ իրօք, հետաքրքիր եմք իմանալ թէ ի՞նչ կը հասկցուի Ազգ. փրկութիւն ասելով, երբ թոյլ կը տամք որ ասդին սովէ և թշուառութենէ հարիւրաւոր Հայու տուներ կործանին, անդին խոր տգիտութեան պատճառաւ հազարաւոր Հայեր Քուրդանան, ասա հարիւրաւոր Հայեր իւրեանց ազգային լեզուն մոռնան, անդ հազարաւորներ իւրեանց ազգութիւնը կորսնցունեն: Մեք կը հաւատամք ազգային փրկութեան. այլ ո՞չ իրաց այս վիճակին մէջ . . .

Ընդհակառակն, Քուրդահայոց արդի վիճակին մէջ, փրկութենէ հեռի, մեր ազգին մի կարևոր մասին վերջնական ոչնչումը միայն կը տեսնեմք, եթէ ընդ փոյթ դարման չը տարուի այդ վիճակին:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

Վան. դեկտեմբերի 28. 80

Մեր մէջ մի զրուցուած կայ որ շատ յարմար կը դայ Թիւրքիոյ տէրութեան բռնած ներկայ ընթացքին, «կանչէն հանել աչք դնել». այս է ահա Թուրքիոյ ներկայ քաղաքականութիւն. փաշա մը որ չէ կրցած այս ինչ քաղաքը լաւ կառավարել զայն պաշտօնանկ անելու փոխարէն, ուրիշ քաղաքի կառավարիչ կանուանէ զայն, առանց մտածելու որ այս քաղաքը կառավարել չը գիտցողը, ուրիշ քաղաք մը ինչպէս կրնայ կառավարել. այս դրութիւնի համեմատ, չարաթ քանի մը անգամ նախարարներ, եպարքոսներ կը փոխվին և սրանց կը յաջորդեն այնպիսի անձինք, որք փոխանակ առաջիններէն լաւ լինելու, աւելի գէշ կը լինին: Ծանուցագրեր կը դրվին, յանձնաժողովներ կը կազմվին, քօմիսէրներ կը ղրկվին զանազան քաղաքներ, գաւառներ. և սոքա փոխանակ ժողովրդեան ցաւերը մեղմացնելու, հարստահարութեանց կեղեքմանց առաջն առնելու, ժողովրդեան ցաւերը ականջէն կը հանէն և աչքը կը դնեն: Անցեալ ամիսի մէջ իւրաքանչիւր գաւառի, քաղաքի կուսակալներ և կառավարիչները, իւրեանց իրաւասութիւնի տակ գտնված գիւղերում, բնակչաց չատութիւնին նայելով հայ, Թուրք և քիւրդ միւտիրներ նշանակեցին. նշանակված միւտիրներ այնպիսի մարդիկներ են, որք փոխանակ ժողովրդեան ցաւերը մեղմացնելու, ականջէն կը հանեն և աչքի մէջ կը դնեն:

Զարաչար կը խարուին անոնք, որք կը կարծեն որ Թուրքիան բարենորոգումներ պիտի մտցնէ Հայաստանում, և Հայաստանում բնակվող ժողովուրդը պիտի կարենայ անդորր և խաղաղ կեանք վարել, տէր լինելով իր կենաց, իր պատիւին և իր ընչից և այլն և այլն: Անոնք որ սակայն կը մտածեն, անոնք «Մեղուի» խմբագրի չափ խելք ունեցողներն են. ահա ինչ կը գրէր նա իր 67 թիւ առաջնորդող յօդուածի մէջ. «Շատերն տեսնելով Տաճկաստանի դիմադրութիւնը Զէրնօգօրիայի հարցումը, կարծում են որ նաև ներքին բարեկարգութեանց և Հայաստանի բարենորոգմանց հարցումն էլ, նոյն դիմադրութիւն կանէ, և ամենայն ինչ իր հին դրութեան մէջ թողնել կը յաջողի, բայց մենք կարծում ենք որ այդ անհնար է» և այլն և այլն.

Մենք չը գիտենք թէ «Մեղուն» ինչ պատճառաւ սաչափ պաշտպան կը հանդիսանայ Թուրքիոյ պէս մի մեռած և փտած տէրութեան, որ Թանզիմաթի հաստատութենէն ցայսօր ամեն ժամանակ խոստումներ արած է բարենորոգումներ մտցնել Հայաստանում, հաւաստի նկատել իր ամեն հպատակները առանց նայելու թէ ինչ կրօնի և ինչ ազգութեանը կը պատկանին նոքա, այն օրէն մինչև այսօր մենք չենք տեսած որ Թուրքիան իր արած խոստումներին գոնէ մէկ հազարերորդ մասը գործադրել բարեհաճէր,—այլ ընդհակառակն նա աշխատած է և կաշխատի միշտ փոխանակ Հայաստանը բարեկարգելու, փոխանակ Հայոց արդար պահանջումները գոհացնելու, խղդել հայոց իրաւունքներ. նա աշխատած է և կաշխատի Հայկական խնդիր այնպիսի կերպով մը լուծել որ քանի մը ամսէն մի քանի հայ միայն մնայ Հայաստանում:

Անոնք որ քիչ մը Թուրքիոյ անցեալը և ներկայն իմաստասիրած են, անոնք որ գիտեն թէ Թուրքիոյ իշխանութեան տակ գտնուած այժմեան քաղաքներ ինչ դիրքի մէջ կը գտնվին այժմ, առաջ ինչ դիրքի մէջ էին, անոնք կը համոզվին որ Թուրքիան աւերելու և քանդելու մէջ միայն վարժ է: Մի առած կայ մեր մէջը թէ «Տաճկի ոտք կոխած տեղը խոտ չի բուսիր» բայց «Մեղուի» խմբագրէն ամեն մարդ կը խոստովանի թէ այս առածը բոլորովին ճիշդ է:

Թէև մեր նպատակը «Մեղուի» նպատակը, արարքները, գրածները քննադատել չէ, բայց և այնպէս հարկ կը համարիմք քանի մը խօսք զրուցել:

Փափագելի է որ «Մեղուն» թուղթը մրոտելով հասարակաց կարծիքը չը պղտորէր համոզելով ուրիշներին թէ «Մշակը» կուզէ որ հայերը բողոքական լինին կամ կաթոլիկ դառնան: Ուրիշ բան է, եթէ նա որոշած է «Մշակի» արտայայտած մտքերին միշտ դէմ գրել. «Մշակի» գրածներից իրեն համար նիւթ վերցնել, «Մշակի» ճերմակ ասածին սև ասել, սա պատճառաւ միայն որպէս զի Նիւթեր չը պակսին: Իսկ եթէ դուք, «Մեղու», սա պատճառաւ է որ կը ցածանաք, հոդ չէ, շարունակեցէք գրել ինչ որ գրած էք մինչև այսօր. բայց պարտիք հրապարակաւ խոստովանել այս բանը, իսկ եթէ դուք համոզուած էք որ ձեր պաշտպանած դաղափարներ «Մշակի» պաշտպանածներից լաւ. և խելքի պառկող, ուղիղ բանի համաձայն է, առանց արժանապատուութեանդ դպչելու կը խնդրեմք որ մի քիչ խելքներիդ ամիսփէք, և մէյ մը մտածէք որ դուք ձեր արտայայտած միտքերով հասարակաց կարծիքը պղտորելի զատ ուրիշ օգուտ մը չէք աներ:

Ինչպէս «Մեղուն» որոշած է միշտ «Մշակի» դէմ գրել, «Մշակի» գաղափարներին հակառակ լինել, նոյնպէս Թուրքիան էլ որոշած է հակառակվել այն ամեն բաներին, որոնցմէ կը կարծէ բարութիւն մը ծագի հայոց: Զը գիտեմք Թուրքիան ինչ պատճառի համար չուզեր որ Հայեր վիճակագրութիւն անեն. կերևայ թէ ասկից մի վնաս կը հեռատեսէ իր գոյութիւնին. շատ մը գիւղերի վիճակագրութիւններն կառավարութիւն բռնած է իրր արգելուած մի բան. տեղւոյս առաջնորդարան շատ աշխատեցաւ զանոնք ետ առնելու, տակաւին չը յաջողեցաւ. և կերևի թէ յաջողելիք ալ չունի:

Այն գիւղերի վիճակագրութիւնէն զատ զորս տեղւոյս կառավարութիւն վար դրած է, մնացեալ գիւղերի համագումարն եղած է.

Վան քաղաքամէջ	491	տուն	1355	արու	1056	էգ
» Այգեստան	2395	»	7708	»	7280	»
Մահմտանք	601	»	3366	»	3136	»
Հայոց ձոր	976	»	3687	»	3474	»
Ոսման-Գավաչ	819	»	3399	»	3216	»
Բզնունիք	568	»	1892	»	2245	»
Քաջբերունիք	659	»	3073	»	2823	»
Թիմար	1786	»	6646	»	5023	»
Շատախ	1158	»	4499	»	3917	»
Մոկք	647	»	3031	»	2496	»
	10100	»	38636	»	34666	էգ
			34666	էգ		
			73322			

Համագումար կը լինի 73322 թէ արու թէ էգ. մնացեալ գիւղերն ալ միասին հաշուելով 140000 կանցնի: Միայն Վասպուրականի մէջ 140000 հատ հայ կայ. 90000 մկկդի թողունք ծեր և տղայ հաշուելով, մնացած 50000-ով ինչեր գործել կարելի չէ արդեօք:

Վանեցի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էմիլ Զօլայի «Նանա» բոմանից պ. Վիլեամ Բիւզնակ կազմել է մի դրամա և բոմանի հերոսուհի Նանային այն ատելեան փոփոխութեան է ենթարկել, որ առաջվայ «Նանայի» բնաւորութեան հշոյլն էլ չէ մնացել: Այս օրերումս այդ դրաման տրվեցաւ Ambigu թատրոնում մեծ աջողութեամբ: Էմիլ Զօլան այն հեղինակներից է, որ կարճ ժամանակամիջոցում արդէն մեծ անուն է հանել և իր ուղղութեամբ, հակառակ բոմանտիական ուղղութեան, մի նոր դպրոց է կազմել վիպական գրականութեան մէջ և ունի արդէն շատ հետևողներ թէ Ֆրանսիայում և թէ ուրիշ երկիրներում: Ում յայտնի չեն Դոդէի, Ֆլօբերի և Գոնկուր եղբայրների գեղեցիկ գրուածները: Այդ հեղինակների բոլոր գրուածները արդէն վաղուց թարգմանված են ռուսերէն լեզուով: Զօլան աշխատակցում է ռուս «Вѣстникъ Европы» ամսագրում և իր գեղեցիկ փոքրիկ, կենդանի պատկերներով և կրիտիկական յօդուածներով վաղուց գրաւել է ռուս ընթերցողների ուշադրութիւնը:

* * *

Նորերումս տրվեցաւ Comedie Francaise թատրոնում Ալէքսանդր Դիւմայի մի նոր գրուածք «La Princesse de Bagdade» վերնագրով: Զը նայելով օտարոտի վերնագրին, պիէսայի բովանդակութիւնը այժմեան կեանքին է վերաբերվում: Դա մի դժբաղդ ընտանեկան կեանքի նկարագրութիւն է: Առաջին ներկայացումն շատ անաջող վերջացաւ. դերասաններին ժողովուրդը անդադար ընդմիջում էր սաստիկ չվոցներով, մինչև անգամ թոյլ չէին տալիս պիէսան մինչև վերջը հասցնել: Մանաւանդ վրդովված են եղել կանայք, տեսնելով բեմի վրա իրանց մասնաւոր կեանքի ճիշտ նկարագրութիւնը և այն աղմկալի չվոցները վերաբերում են կանանց ինտրիգային: Բայց հեղինակը չէ վհատվում, համոզված լինելով որ մի քանի ներկայացումներից յետոյ այդ պիէսան դարձեալ աջողութիւն պէտք է գտնի: Դիւմայի պիէսաների հետ մեր հասարակութիւնն էլ փոքր ի շատէ ծանօթ է: Թիֆլիսի թատրոնական խումբը ներկայացրած է նրա պիէսաներից.—«La Dame aux Camelias» և «Les ideés de Madame Aubray» (տիկին Օբրէի գաղափարները): Այդ երկու պիէսաների մէջ էլ հեղինակը նը-կարագրում է անբարոյական դասին պատկանող կանանց, որոնք երբ կարողանում են անկեղծ սիրել, ձգտում են իրանց շրջանից դուրս գալ և հասարակութեան օրինաւոր անդամ դառնալ. բայց նախապաշարմունքների հետ չը կարողանալով պատերազմել, զոհ են գնում: Դիւման առհասարակ ճնշված կանանց պաշտպան է հանդիսացել միշտ և մանաւանդ վերջին ժամանակները: Բացի բոմաններից և թատրոնական պիէսաներից վերջին ժամանակ նա սկսել է և բրոշիւրներով պաշտպանել կնոջ իրաւունքները: Երկու ամիս սրանից առաջ նա հրատարակեց մի գրքոյկ «Les Femmes qui tuent et les Femmes qui votent» (կանայք որոնք սպանում են և կանայք որոնք քուէարկում են) վերնագրով, որի մէջ նա ամենաջերմ պաշտպան է հանդիսանում կնոջ իրաւունքներին թէ ընտանեկան, թէ հասարակական և թէ պետական կեանքի մէջ: Դիւման իր առաջաբանի մէջ պարզ խոստովանվում է, որ նա մի ժամանակ «կնոջ իրաւունք» բառով հասկանում էր կնոջ միայն ընտանեկան, եթէ կարելի է ասել՝ սիրոյ իրաւունքը, և մինչև անգամ ծաղրելիս է եղել այն կանանց, որոնք ձգտում էին դէպի աւելի բարձր իրաւունքները: Այժմ Դիւման անկեղծօրէն հրաժարվում է իր ունեցած այդ սխալ կարծիքից և իր պաշտպանութեան ու պահանջողութեան մէջ մինչև անգամ ծայրայեղութեան է հասնում իր գրուածքի այն մասում, ուր նա խօսում է կնոջ սիրոյ ազատութեան մասին: Այդ գրքոյկը որ մեծ ազմուկներ գցեց ամենայն շրջաններում, որոնք հետաքրքրվում են այդ հարցով, արդէն թարգմանվեցաւ շատ լեզուներով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի: Երրորդ բաժնի գործակալին կալանաւորելու մասին հաղորդած լուրի վերաբերութեամբ „Herold“ լրագիրը աւելացնում է, իբր թէ այն անձը, որի բնակարանի մէջ կալանաւորվեցաւ գործակալը, գեներալ Մեզենցեվին սպանողներից մէկն է:

Կ. ՊՕԼԻՍ, 5 փետրվարի: Բէյլրուտի մէջ պատահած վէճի պատճառով մահմետականների և ուղղափառների մէջ, երեք կին, որոնցից մէկ մահմետական և երկուսը քրիստոնեայ, սպանված են: Տաս մարդ վիրաւորված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 35 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 25 կ., երկրորդ 223 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր., ոսկի 7 ր. 73 կ.: Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 25,31 պէնս, Ամստերդամի վրա 124 պէնս, ռուսաց 100 լուրլ Համբուրգի վրա արժէ 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 267 ֆրանկ 25 սանտիմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի: „Голосъ“ լրագրին հաղորդում են Օդէսայից փետրվարի 6-ից, որ երէկ սկսվեցաւ նաւագնացութիւնը տաք և պարզ եղանակի շնորհիւ: Լէյդը բոլորովին մաքրվեցաւ սառուցից: „Новое Время“ լրագիրը հաղորդում է. փետրվարի 5-ին, ձմեռային պալատի մէջ եղած ճայթիւնի տարեդարձին, մաղթանք և հոդեհանդիստ կատարվեցան: Յունվարի 12-ին մաղթանք կատարվեցաւ, որին ներկայ էր թագաւոր կայսրը կայսերական տան բոլոր անդամների հետ:

ՆՈՎՕԶՆԵՐԿԱՍԿ, 6 փետրվարի: Գեներալ Մասլակովցի գրութեան թուանշանների ստուգումը, որ առիթ տուեց զեմստվոն վարչութեանը հպատակելու համար ենթադրութիւններին, ցոյց տուեց, որ եզրակացութիւնները սխալ թուանշաններից են ստացված: Մասլակովցեց վերադառնում է այստեղ Ս. Պետերբուրգից: Ատաման Կրասնօկուտսկի ուղևորվում է Ս. Պետերբուրգ, որտեղից նա, ինչպէս ասում են, էլ չի վերադառնայ: Կարծում են, որ նրան կարող են փոխարինել իշխան Խմելեւսկի, կոմս Իգնատիև կամ գեներալ Վանովսկի: Սիբիրական ախտով հիւանդանալու մի քանի դէպքեր են պատահել, մէկը մեռած է: Ջեղծումներ են յայտնված կօզակներին ծառայութիւն ուղարկելու. վերաբերութեամբ և գտնված է գիւղական կեղծված վճիռ: Այդ գործին մի քանի պաշտօնական անձինք էլ են մասնակցել:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ